Պետրոս Դուրյան

Դրժել

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դրժոխք մ՚անեծք խոցեց հոգյակս:

Ես ուզեցի պաշտել ըզնե,
Սիրել ժպիտքն՝ փրթիթք անհուն,
Սիրել աստղերն սև աչերուն
Եվ այն խոկումն, որ մրթագնե
Պայծառ ճակատը՝ այն ամպրն է
Որ կրշպարե դեմքը լուսնույն:

Գիշեր մը սուգ, անդունդ մ՚հառաչ՝
Հուզեց ներա հոգին ու լանջ:

Ես ուզեցի միշտ քովն ըլլալ,
Մրտիկ ընել թնդյուն սրտին,
Շնչել, խմել ներա հոգին,
Եվ շոշափել լոկ ձյունափայլ
Ծոծրակին վրրա ծալ–ծալ
Թափող վարսից ալյակք ծրփին:

Օվկեան մը տրտունջ լսեցի,
«Ջիս կրնեղե՛ս» հրծծեց ինծի:

Ես ուզեցի քընար մ՚ըլլալ
Ներա ձեռքին տակ հևացող,
Ներա հոգվույն խորն հիացող
Թեթև պատկեր մ՚ըլլալ շարժյալ,
Մոռնալ զիս, լոկ ըզնե խոկալ՝
Կվառե երազ մ՚որուն մեկ շող:

Ամպրոպ մը սաստ ցընցեց հոգիս,
Գոչեց. «Սիրել չե՛ս կրնար զիս»:

Ի զո՛ւր սիրտըս մըխաց առջին՝
Խնկարկելու սիրտն անապատ,
Ցուցի իրեն ճակատս գունատ,
Կուրծըս գոգած՝ մառն իմ աչքին,
Ի զո՛ւր շուրթերս դողդոջեցին,
Ջինքը սիրելս հրծծեցին հայտ:

Նե հեռացավ ինձմե, ըսավ՝
«Բավ սիրեցի քեզ, մնաս բարյա՛վ»:

Որոտացին խոկմանցս ամպեր,
Կայծակնահար ըրին հոգիս,
Մոխիր դարձան երազներս հիս,
Ճակատագիրս խնծղաց ի վեր,
Խորշ մը կար որ զիս չէր ծաղրեր,
Այն՝ լուռ փոսն էր գերեզմանիս . . .

Փունջ մը կնճիռ, բույլ մը կայծակ,
Դժոխք մ՚անեծք խոցեց հոգյակս:

1871